

ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

Անմահութի՛ն՝ իրաւ կա՞ս, թէ ի՛րապէս դուն չըկաս,
Կը միանամ ես ահա այն մարդերուն կորովի,
Այն մարդերուն եսասէր, եւ վախկոտ այն մարդերուն,
Որոնք նոյնիսկ՝ երբ չըկաս, այլեւս քեզ գաղտնօրէն

Եւ կամ ի լուր աշխարհին չեն ենթարկեր կասկածի:
Կեանքը կ'ըլլայ այսպէս հեշտ. մահն ալ նոյնիսկ սիրելի.
Բաժանումներն ողբալի չեն ցաւցըներ քեզ այլեւս:

Հոն կը գըտնես հայրդդ որ, առանց մընաս բարովի,
Մահը տարաւ, ու մայրիկդ՝ որ դարձաւ տունն իր վըստահ.
Եւ փոքրիկ քոյրդ որ առջիդ մահուան խորհուրդը բացաւ.

Սիրելիներդ բոլոր՝ նետուած մահուան մութին մէջ:
Լինելու ես անպայման, որպէս զի վախս հեռանայ
Մեռնելու ցաւս ամոքի. եւ չըթուի կեանքն ունայն:

ԱՆԵԼ